ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 21.04.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-19/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2016թ. թիվ 03/73-1/28026-16 և 27.03.2017թ. թիվ 03/73-3/5355-17 գրություններով ներկայացված «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-19/17 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-19/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 19.04.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 09.12.2016թ. թիվ ԴՎԱ/3858 գրության հիման վրա, 16.12.2016թ. թիվ 03/73-1/28026-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝

Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 10.03.2017թ. թիվ 01/04.1/877-17 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2016թ. թիվ 03/73-1/28026-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով արձանագրել է «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերությանը ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ, քանի որ Օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (20.10.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելու հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 27.03.2017թ. թիվ 03/73-3/5355-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության կարիքների համար կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՔԾ-1» ծածկագրով ընթացակարգին 31.01.2016թ. և ՀՀ «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ

15/11-ՀԱԳ-17/2» ծածկագրով ընթացակարգին 03.03.2017թ. «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ը մասնակցության հայտեր է ներկայացրել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 124-րդ կետի 2-րդ ենթակետը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 20.12.2016թ. թիվ 01/04.1/4641-16 գրությամբ դիմել է «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ին, սակայն Ընկերության կողմից կարծիք չի ներկայացվել:

«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ը, պատշաճ ծանուցված լինելով 31.03.2017թ. ժամը 16:40-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-19/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Միևնույն ժամանակ Ընկերությունը Խորհրդին ուղղված 31.03.2017թ. գրությամբ հայտնել է, որ 2013թ. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ի միջև կնքվել է ընդհանուր առմամբ ապրանքների գնման թվով 11 պայմանագրեր: Մատակարարված ապրանքների գումարը կազմել է 1 330 586 634 ՀՀ դրամ, սակայն Պատվիրատուի կողմից վճարվել է 1 295 456 759 ՀՀ դրամ կամ պակաս է վճարվել նախնական հաշվարկներով 35 129 875 ՀՀ դրամ, քանի որ համաձայն պայմանագրի 7.5 կետի գնորդը պարտավոր է վճարման ժամկետների խախտման համար վճարել յուրաքանչյուր ուշացված օրվա համար տույժ 0,05 տոկոսի չափով:

Դեռևս 2015թ. սեպտեմբերի 22-ից (28.10.2015թ., 23.03.2016թ.) Ընկերությունը բազմիցս դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը չվճարված գումարները ստանալու պահանջով, սակայն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով առ այսօր հարցը

լուծված չէ: Պատվիրատուն իբր Ընկերության կողմից պարտքեր ունենալու պատրվակով 2016թ. սկզբներին դիմել է ՀՀ զինվորական դատախազություն: Գործը քննել է քննչական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումը, որտեղ Ընկերության կողմից տրված բացատրության մեջ Ընկերությունը պարտավորուն է ստանձնել թերմատակարարված ապրանքը մատակարարել միայն պարտք գումարները դտանալուն պես, քանի որ կրեդիտորական աննախադեպ պարտքի պատճառով Ընկերությունը հայտնվել է ֆինանսական ճգնաժամի մեջ, իսկ հարուցված քրեական գործը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով:

20.10.2016թ. ՀՀ պաշտպանության նախարարությունը միակողմանի լուծել է կնքված պայմանագրերը պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու հիմքով, այն դեպքում, երբ պայմանագրերը նախատեսված էին միայն 2013թ. բյուջետային տարվա գնումների պլանով և մատակարարված ապրանքների դիմաց այլ ժամանակահատվածում չէին կարող վճարում իրականացնել, ուստի Ընկերությունը գտնում է, որ պայմանագրերի լուծումը կատարվել է ոչ իրավաչափ և հակասում է գործող օրենքներին:

Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ի միջև կնքված պայմանագրերի 9.4 կետը և Կենտրոնի 10.03.2017թ. թիվ 02101.1878-17 գրությունը սկսվել են կողմերի միջև բանակցությունները, ուստի վերջնական արդյունք արձանագրելու համար՝ Ընկերությունը Խորհրդին խնդրել է 10-օրյա ժամկետով հետաձգել 31.03.2017թ. նշանակված Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքերի ուսումնասիրության նպատակով նշանակված բողոքը քննող հանձնաժողովի առաջին նիստը:

Սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ Ընկերության կողմից չի ներկայացվել իր դիրքորոշումը հիմնավորող համապատասխան փաստաթղթերը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկներ և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 09.12.2016թ. թիվ ԴՎԱ/3858 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը հիմք ընդունելով Պատվիրատուի և «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ի միջև 08.01.2013թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/6-5»

ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) 3.1.6.1 կետի «բ» ենթակետը՝ 20.10.2016թ. մսաբուսական «պահածո ոլոռով խյուս խոզի մսով» ապրանքատեսակի չմատակարարած մասով միակողմանի լուծել է 08.01.2013թ. «ՇՀԱՊՁԲ-7/6-5» ծածկագրով գնման պայմանագիրը և դրան կից 25.01.2013թ. կնքած թիվ 1 համաձայնագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 31.03.2017թ. ժամը 16:40-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-19/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԳԲԽ-19/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 19.04.2017թ. եզրակացությունը և առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2016թ. թիվ 03/73-1/28026-16 և 27.03.2017թ. թիվ 03/73-3/5355-17 գրություններով ներկայացված «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ին (ՀՎՀՀ՝ 00869016) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երեք տարի ժամկետով:

5. **<u>ՍՑ-ԳԲԽ-19/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2016թ. թիվ 03/73-1/28026-16 և 27.03.2017թ. թիվ 03/73-3/5355-17 գրություններով ներկայացված «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ի միջև 08.01.2013թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-7/6-5» ծածկագրով գնման պայմանագիրը:

2. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող 25.01.2013թ. թիվ 1 համաձայնագրի Հավելված՝ գնման ժամանակացույցով Ընկերությունը պարտավորվել է 2013թ. մարտ-դեկտեմբեր ամիսների ընթացքում մատակարարել հետևյալ ապրանքատեսակները՝ «ոլոռով խյուս մսով»՝ 119 780 կգ (մարտ-նոյեմբեր ամիսների ընթացքում՝ 11 900 կգ., դեկտեմբեր ամսին՝ 12 680 կգ), «ոլոռով խյուս խոզի մսով»՝ 119 780 կգ (մարտ-նոյեմբեր ամիսների ընթացքում՝ 11 900 կգ., դեկտեմբեր ամսին՝ 12 680 կգ),, «ցորենաձավարով շիլա խոզի մսով»՝ 119 780 կգ (մարտ-նոյեմբեր ամիսների ընթացքում՝ 11 900 կգ., դեկտեմբեր ամսին՝ 12 680 կգ),, «ցորենաձավարով շիլա հավի մսով»՝ 119 800 կգ (մարտ-նոյեմբեր ամիսների ընթացքում՝ 11 900 կգ., դեկտեմբեր ամսին՝ 12 680 կգ),, «ցորենաձավարով ոլոռով շիլա խոզի մսով»՝ 119 800 կգ (մարտ-նոյեմբեր ամիսների ընթացքում՝ 11 900 կգ., դեկտեմբեր ամսին՝ 12 680 կգ):

3. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության կողմից ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետին ուղղված 20.10.2016թ. թիվ 7804 գրության համաձայն՝ Պատվիրատուի և Ընկերության միջև 08.01.2013թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/6-5» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը պարտավորվել էր 2013թ. մարտ-դեկտեմբեր ամիսներին ՀՀ ՊՆ կարիքների համար մատակարարել 545 723.5 կգ հինգ տեսակի մսաբուսական պահածոներ՝ ընդհանուր 453 615 739 ՀՀ դրամի, սակայն 20.10.2016թ. դրությամբ չի մատակարարվել 3 395.55 կգ մսաբուսական պահածո «ոլոռով խյուս խոզի մսով» ապրանքատեսակը:

4. Պատվիրատուն 20.10.2016թ. թիվ ԴՎԱ/3308 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.6 կետի «բ» ենթակետը՝ 20.10.2016թ. միակողմանի լուծարում է Պայմանագիրը:

5. Կենտրոնը 10.03.2017թ. թիվ 01/04.1/877-17 գրությամբ արձանագրել է «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը, միևնույն ժամանակ հաշվի առնելով Ընկերության կողմից խախտումը թույլ տալու օրվանից ***(20.10.2016թ.)*** հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ

տեղեկատվության բացակայության հանգամանքը, գտել է, որ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

6. «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ը ՀՀ Հատուկ քննչական ծառայության կարիքների համար կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՔԾ-1» ծածկագրով ընթացակարգին 31.01.2016թ. և ՀՀ «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀԱԳ-17/2» ծածկագրով ընթացակարգին 03.03.2017թ. մասնակցության հայտեր է ներկայացրել:

7. Պայմանագրի լուծման հետևանքով հաշվարկված տուժանքի և տույժի չափը կազմում է 51 404 801 ՀՀ դրամ, որից՝ 49 831 760 ՀՀ դրամը որպես Պայմանագրի ապահովում, իսկ 573 041 ՀՀ դրամը՝ որպես տույժ պայմանագրով ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար:

6. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության 09.12.2016թ. թիվ ԴՎԱ/3858 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ***ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ պաշպանության նախարարության և «Դանինի» ՍՊԸ հայաստանյան մ/ճ-ի միջև 08.01.2013թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/6-5» ծածկագրով գնման Պայմանագրի 1-ին կետի 1.1

ենթակետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ Ընկերությունը) պարտավորվում է նույն Պայմանագրով և նրա անբաժանելի մասը հանդիսացող գնման ժամանակացույցով (Հավելված 1) սահմանված կարգով, նախատեսված քանակներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին՝ ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությանը, հանձնել նույն պայմանագրի Տեխնիկական բնութագրերով (Հավելված 2), նախատեսված տեսակի և որակի ապրանքներ (այսուհետ նաև՝ Ապրանք իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

Նույն Պայմանագրի 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը Ապրանքը մատակարարում է Գնորդին կամ Ստացողին նույն Պայմանագրով նշված ծավալներով և ժամկետներում:

Պայմանագրի 3.1.6 կետը սահմանում է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն կետի 3.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:

Պայմանագրի անբաժանելի մաս կազմող 25.01.2013թ. թիվ 1 համաձայնագրի Հավելված՝ գնման ժամանակացույցով Ընկերությունը պարտավորվել է 2013թ. մարտ-դեկտեմբեր ամիսների ընթացքում մատակարարել հետևյալ ապրանքատեսակները: «ոլոռով խյուս մսով»՝ 119 780 կգ (մարտ-նոյեմբեր ամիսների ընթացքում՝ 11 900 կգ., դեկտեմբեր ամսին՝ 12 680 կգ), «ոլոռով խյուս խոզի մսով»՝ 119 780 կգ (մարտ-նոյեմբեր ամիսների ընթացքում՝ 11 900 կգ., դեկտեմբեր ամսին՝ 12 680 կգ),, «ցորենաձավարով շիլա խոզի մսով»՝ 119 780 կգ (մարտ-նոյեմբեր ամիսների ընթացքում՝ 11 900 կգ., դեկտեմբեր ամսին՝ 12 680 կգ),, «ցորենաձավարով շիլա հավի մսով»՝ 119 800 կգ (մարտ-նոյեմբեր ամիսների ընթացքում՝ 11 900 կգ., դեկտեմբեր ամսին՝ 12 680 կգ),, «ցորենաձավարով-ոլոռով շիլա խոզի մսով»՝ 119 800 կգ (մարտ-նոյեմբեր ամիսների ընթացքում՝ 11 900 կգ., դեկտեմբեր ամսին՝ 12 680 կգ):

Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 19.03.2013թ. թիվ ԴՎԱ/724 գրությամբ հայտնել է, որ «Դանինի» ՍՊԸ հայաստանյան մ/ճ-ը Պայմանագրով պարտավորվել է մինչև նույն թվականի մարտի 8-ը մատակարարել 59 500 կգ հինգ տեսակի մսաբուսական պահածո, սակայն 19.03.2013թ. դրությամբ Ընկերության կողմից մատակարարումներ չեն իրականացվել:

Նշված գրությամբ Պատվիրատուն Ընկերությանը տեղեկացրել է, որ չմատակարարված ապրանքներն անհրաժեշտ է մատակարարել սեղմ ժամկետներում, հակառակ դեպքում ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի կողմից կձեռնարկվեն օրենքով նախատեսված համապատասխան միջոցներ և կքննարկվի հետագա համագործակցության նպատակահարմարության հարցը:

Ընկերությանն ուղղված 05.04.2013թ. թիվ ԴՎԱ/957 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերությունը 19.03.2013թ. թիվ ԴՎԱ/724 գրությամբ արդեն իսկ նախազգուշացվել է մատակարարումները սահմանված նորմերի համաձայն կազմակերպելու վերաբերյալ, սակայն 05.04.2013թ. դրությամբ Ընկերության կողմից Պայմանագրի շրջանակներում դեռևս մատակարարումներ չեն իրականացվել:

Նշված գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ չմատակարարված ապրանքներն անհրաժեշտ է մատակարարել մինչև 15.04.2013թ., իսկ նշված ժամկետում չմատակարարելու փաստը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կդիտարկվի որպես բավարար պայման Պայմանագիրը օրենքից բխող հետևանքներով միակողմանի լուծարելու համար:

Պատվիրատուն «Դանինի» ՍՊԸ հայաստանյան մ/ճ-ին ուղղված 23.04.2013թ. թիվ ԴՎԱ/1216 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը Պայմանագրով պարտավորվել է մինչև նույն թվականի ապրիլի 8-ը մատակարարել 119 000 կգ հինգ տեսակի մսաբուսական պահածո:

Պատվիրատուն նշված գրությամբ հայտնել է, որ 19.03.2013թ. թիվ ԴՎԱ/724 05.04.2013թ. թիվ ԴՎԱ/957 գրություններով Ընկերությունն արդեն իսկ նախազգուշացվել է Պայմանագրի շրջանակներում մատակարարումները սահմանված ժամանակացույցին համաձայն կազմակերպելու վերաբերյալ, սակայն 22.04.2013թ. դրությամբ Ընկերության

կողմից Պայմանագրի շրջանակներում մատակարարվել է ընդամենը 30,5 տոննա մսաբուսական պահածո:

Նշված գրությամբ Պատվիրատուն Ընկերությանը տեղեկացրել է, որ մինչև 30.04.2013թ. անհրաժեշտ է կարգավորել մատակարարումների ընթացքը, իսկ սահմանված ժամկետում մատակարարումների ընթացքի էական տեղաշարժ չլինելու դեպքում՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կքննարկվի Պայմանագիրը օրենքից բխող հետևանքներով միակողմանի լուծարելու հարցը:

Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 02.05.2013թ. թիվ ԴՎԱ/1271 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը 19.04.2013թ. Պայմանագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան բազա է մատակարարել 6 142,5 կգ մսաբուսական պահածո («ոլոռով խյուս մսով»), որի հետազոտության արդյունքում պարզվել է, որ մատակարարված պահածոները չեն համապատասխանում սահմանված նորմերին:

Պատվիրատուն տեղեկացրել է, որ անհրաժեշտ է ապրանքների մատակարարումն իրականացնել սահմանված նորմերին համապատասխան, հակառակ դեպքում՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենի կողմից կքննարկվի հետագա համագործակցության նպատակահարմարության հարցը:

Ընկերությանն ուղղված 06.12.2013թ. թիվ ԴՎԱ/3573 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերությունը Պայմանագրով նախատեսված ապրանքներից 29.11.2013թ. դրությամբ պակաս է մատակարարել 5 տեսակի մսաբուսական պահածոներից ընդհանուր՝ 162 242 կգ:

Նշված գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ մինչև 20.12.2013թ. Պայմանագրով նախատեսված ապրանքները Ընկերության կողմից չմատակարարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից պայմանագիրը միակողմանի կլուծարվի կիրառելով օրենքով նախատեսված բոլոր տույժեր-տուգանքները:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության կողմից ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետին ուղղված 20.10.2016թ. թիվ 7804 գրության համաձայն՝ Պատվիրատուի և Ընկերության միջև 08.01.2013թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/6-5» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը պարտավորվել էր 2013թ. մարտ-դեկտեմբեր ամիսներին ՀՀ ՊՆ

կարիքների համար մատակարարել 545 723.5 կգ հինգ տեսակի մսաբուսական պահածոներ՝ ընդհանուր 453 615 739 ՀՀ դրամի, սակայն 20.10.2016թ. դրությամբ չի մատակարարվել 3 395.55 կգ մսաբուսական պահածո «ոլոռով խյուս խոզի մսով»:

Պատվիրատուն 20.10.2016թ. թիվ ԴՎԱ/3308 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.6 կետի «բ» ենթակետը՝ 20.10.2016թ. միակողմանի լուծարում է Պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելուց պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Պայմանագրի 3.1.6 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն կետի 3.1.7.1 ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:

Այսպիսով՝ Ընկերությունը Պայմանագրի հիման վրա պարտավորվել էր 2013թ. մարտ-դեկտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար մատակարարել 5 ապրանքատեսակ՝ յուրաքանչյուր ամսվա համար համապատասխան քանակներով:

Ընկերությանն ուղղված մի շարք գրություններով Պատվիրատուն արձանագրել է, որ Ընկերության կողմից բազմիցս խախտվել են Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետները, ինչպես նաև թերի է մատակարարվել Պայմանագրով նախատեսված Ապրանքը:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության կողմից ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետին ուղղված 20.10.2016թ. թիվ 7804 գրության համաձայն՝ Ընկերության կողմից 20.10.2016թ. դրությամբ չի մատակարարվել 3 395.55 կգ «ոլոռով խյուս խոզի մսով» ապրանքատեսակը, այն դեպքում, երբ Ընկերության կողմից պետք է մատակարարվեր 119 780 կգ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը թույլ է ՀՀ պաշտպանության նախարարության և «Դանինի» ՍՊԸ հայաստանյան մ/ճ-ի միջև 08.01.2013թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/6-5» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագրով նախատեսված պարտավորության մեկից ավելի անգամ խախտում, քանի որ Ընկերությունը Պայմանագրով պարտավորվել է 2013թ. մարտ-դեկտեմբեր ամիսների ընթացքում մատակարարել հինգ տեսակի ապրանքատեսակ համապատասխան քանակներով, սակայն Ընկերության կողմից բազմիցս խախտվել են մատակարարման ժամկետները, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված 119 780 կգ «ոլոռով խյուս խոզի մսով» ապրանքատեսակից մատակարարվել է ընդամենը 3 395.55 կգ ապրանքատեսակ:

Կարգի 125-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***3 տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը:***

ՀՀ պաշտպանության նախարարության 20.10.2016թ. թիվ ԴՎԱ/3308 գրության համաձայն՝ Ընկերության կողմից վճարվելիք «ՇՀԱՊՁԲ-7/6-5» ծածկագրով պայմանագրի ապահովման և Պայմանագրով ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկված տուժանքի ընդհանուր գումարի չափը կազմել է ***51 40[illegible] 801 ՀՀ դրամ, որը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը:***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2016թ. թիվ 03/73-1/28026-16 և 27.03.2017թ. թիվ 03/73-3/5355-17 գրություններով ներկայացված «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ-ին (ՀՎՀՀ՝ 00869016) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երեք տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Հայրապետյան Գևորգ**

Անդամ՝ **Մնացականյան Հասմիկ**